ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

27 մարտի 2025թ. **N 11-Ն**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԵՎ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՍՏ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ, ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԸ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԴԻՄՈՒՄՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԸՍՏ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ, ՆԱԽԸՆՏՐԱԾ ՎԱՅՐԻ ՄԱՏՉԵԼԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ, 3.1-րդ, 4-րդ, 5-րդ և 5.1-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել՝

1) Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու, ըստ գտնվելու վայրի (նախընտրած վայրի մատչելի) ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին դիմումների ձևը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հանվելու, ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի (նախընտրած վայրի մատչելի) ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ավելացվելու վերաբերյալ ծանուցման ձևերը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու, ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու կարգը և ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հանվելու և ըստ գտնվելու վայրի (նախընտրած վայրի մատչելի) ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ավելացվելու վերաբերյալ ծանուցման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ապրիլի 1-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025թ. մարտի 27-ի N 11-Ն որոշման

_____
(նշվում է ընտրողների ցուցակը վարող լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման անվանումը)

ԴԻՄՈՒՄ

[նշվում է ընտրության անվանումը[1]] ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՍՏ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ, ԸՍՏ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ (ՆԱԽԸՆՏՐԱԾ ՎԱՅՐԻ ՄԱՏՉԵԼԻ) ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵՍ (ԻՄ ՎԱՍՏԱՀՈՐԴԸ)՝

ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ՏՎՅԱԼՆԵՐ

ԱԶԳԱՆՈՒՆ _____

ԱՆՈՒՆ _____ **ՀԱՅՐԱՆՈՒՆ** _____

ԾՆՎԱԾ _____ / _____ / _____
օր ամիս տարեթիվ

ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ _____ / _____
համար

ՏՐՎԱԾ _____ / _____ / _____, _____
օր ամիս տարեթիվ ում կողմից

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ (նշում է կատարվում համապատասխան վանդակի դիմաց)

Հայաստանի Հանրապետություն		
Քաղաքացիություն չունեցող		
Օտարերկրյա (նշվում է երկրի անվանումը)		

ՀՀ-ում ՀԱՇՎԱՌՎԱԾ	**ԱՅՈ**		**ՈՉ**	

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՍՑԵ _____ / _____
մարզ համայնք
_____ / _____ /_____ /_____
բնակավայր փողոց շենք (տուն) բնակարան

ՀԱՇՎԱՌՈՒՄ ՉՈՒՆԵՄ՝

ԲՆԱԿՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՀԱՍՑԵ_____ / _____
երկիր քաղաք
_____ /_____ /_____
փողոց շենք (տուն) բնակարան

ՀՀ-ում ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՀԱՍՑԵ_____ / _____
մարզ համայնք
_____ / _____ /_____ /_____
բնակավայր փողոց շենք (տուն) բնակարան

ԷԼ- ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵ _____

ՀԵՌԱԽՈՍ _____

ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԵՄ (նշում է կատարվում համապատասխան վանդակի դիմաց)

Հաշվառում ունեցող ընտրող	☐
Հաշվառում չունեցող ընտրող	☐
Հաշմանդամության հիմքով տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրող	☐
Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրող	☐
Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ	☐
Տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետ	☐

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածը՝ **ԽՆԴՐՈՒՄ ԵՄ** իմ տվյալները ժամանակավորապես ընդգրկել

ԸՍՏ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ	_____ / _____ մարզ համայնք _____ / _____ /_____ բնակավայր փողոց շենք _____/_____ ընտրական տեղամաս (ՏԸՀ անդամի և մասնագետի դեպքում)

ԸՍՏ ՆԱԽԸՆՏՐԱԾ ՎԱՅՐԻ ՄԱՏՉԵԼԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ	_____ / _____ մարզ համայնք _____ / _____ /_____ բնակավայր փողոց շենք _____/_____ ընտրական տեղամաս

Կից՝ **[նշվում են կից ներկայացվող փաստաթղթերը]**

էլ. ստորագրություն

Դիմող (**լիազորված անձ**)՝ _____ _____

(անուն, հայրանուն, ազգանուն) (ստորագրություն՝ թղթային տարբերակի դեպքում)

[դիմում ներկայացնելու օր, ամիս, տարեթիվ]

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025թ. մարտի 27-ի N 11-Ն որոշման

Ձև 1

ԾԱՆՈՒՑՈՒՄ

[նշվում է ընտրության անվանումը և ամսաթիվը] ԺԱՄԱՆԱԿ ԸՍՏ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻՑ ՀԱՆՎԵԼՈՒ, ԸՍՏ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ (ՆԱԽԸՆՏՐԱԾ ՎԱՅՐԻ ՄԱՏՉԵԼԻ) ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով _____
(նշվում է դիմումատուի անունը, հայրանունը, ազգանունը և դիմումի ամսաթիվը)

ստացված դիմումը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով՝

անձը հաստատող փաստաթուղթ _____,
(նշվում է տեսակ, համար, տրման օր, ամիս, տարեթիվ և ում կողմից է տրված)

հասցե՝ _____
(նշվում է մարզ, համայնք, բնակավայր, փողոց, շենք, բնակարան (տուն))

Ձեր փվյալները ժամանակավորապես հանվել են՝ _____

_____
(նշվում է մարզի, համայնքի, բնակավայրի անվանում, իսկ ընտրական տեղամասերի համարները սահմանվելուց հետո՝ նաև ընտրական տեղամասի համար)

ընտրողների ցուցակից և ավելացվել են _____մարզի, _____ համայնքի,

_____ բնակավայրի _____ տեղամասային
(նշվում է տեղամասային կենտրոնի հասցե)

կենտրոնի, թիվ ____/____ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:

_____ _____
(լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կ.Տ.

[նշվում է ծանուցման օր, ամիս, տարեթիվ]

Ձև 2

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ [նշվում է ընտրության ամսաթիվը] ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ԸՆՏՐՈՂԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՍՏ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով _____

(նշվում է դիմումատուի անունը, հայրանունը, ազգանունը և դիմումի ամսաթիվը)

ստացված դիմումը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով՝

անձը հաստատող փաստաթուղթ _____,

(նշվում է տեսակ, համար, տրման օր, ամիս, տարեթիվ և ում կողմից է տրված)

Դուք ընդգրկվել եք _____*մարզի,* _____ *համայնքի,*

_____ *բնակավայրի* _____ *տեղամասային*

(նշվում է տեղամասային կենտրոնի հասցե)

կենտրոնի, թիվ ____/____*ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:*

(ընտրական տեղամասի համարը նշվում է ընտրական տեղամասերի համարները սահմանվելուց հետո)

_____ _____

(լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կ.Տ.

[նշվում է ծանուցման օր, ամիս, տարեթիվ]

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025թ. մարտի 27-ի N 11-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԵՎ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՍՏ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ, ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԴԻՄՈՒՄՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԸՍՏ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻՑ ՀԱՆՎԵԼՈՒ ԵՎ ԸՍՏ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ (ՆԱԽԸՆՏՐԱԾ ՎԱՅՐԻ ՄԱՏՉԵԼԻ) ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) նախատեսված դեպքերում ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողների կողմից՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումների (կից փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով ներկայացման կարգը և բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հանվելու և ըստ գտնվելու վայրի (նախընտրած վայրի մատչելի) ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ավելացվելու վերաբերյալ իրականացվող ծանուցման կարգը:

2. Սույն կարգի 1-ին կետով սահմանված դիմումները կարող են ներկայացվել Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ:

3. Դիմումները և կից փաստաթղթերը լիազոր մարմնին ներկայացվում են առցանց՝ էլեկտրոնային եղանակով:

Էլեկտրոնային եղանակով դիմումը ներկայացվում է սույն որոշման N 1 հավելվածով սահմանված ձևին համապատասխան:

Էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի տրման ամսաթիվը և ժամն ամրագրվում են նաև ինքնաշխատ եղանակով՝ համակարգի կողմից:

4. Դիմումին կից փաստաթղթերը ներկայացվում են դրանց բնօրինակների սքանավորված (տեսաներածված) պատճենները դիմումին կից մուտքագրելու (վերբեռնելու) միջոցով:

Փաստաթղթերի սքանավորված (տեսաներածված) պատճենները պետք է ներկայացվեն PDF, JPG, PNG ֆորմատի ֆայլերով:

Փաստաթղթերի բնօրինակները պետք է սքանավորված (տեսաներածված) լինեն գունավոր՝ առնվազն 300 ՀՏՎ (DPI) խտությամբ, այնպես, որ փաստաթղթի սքանավորված (տեսաներածված) պատճենի ֆայլը պարունակի բնօրինակ փաստաթուղթն ամբողջությամբ:

5. Էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումն ապահովվում է «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Սույն կարգում «էլեկտրոնային թվային ստորագրություն», «էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ», «էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն», «էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր» եզրույթներն օգտագործվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակությամբ:

6. Դիմումը և կից փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով մուտքագրվելուց հետո՝ 4 աշխատանքային ժամերի ընթացքում լիազոր մարմնի կողմից էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման համապատասխան կենտրոնի տվյալների միջոցով ստուգվում է ներկայացված դիմումի վրա դրված էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և դրա պատկանելությունը դիմումը ներկայացրած անձին, ինչպես նաև դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի սքանավորված պատճենների համապատասխանությունը սույն կարգի պահանջներին:

Դիմումի ընդունման ստացականի էլեկտրոնային տարբերակն ուղարկվում է դիմողի էլեկտրոնային փոստի հասցեին:

Առանց էլեկտրոնային թվային ստորագրության ներկայացված դիմումները համարվում են անստորագիր, բացառությամբ՝ սույն կարգի 8-րդ կետով սահմանված դեպքի:

7. Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա լիազոր մարմինը կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին, կամ դիմողին հնարավորություն է ընձեռում շտկելու այդ սխալները՝ սահմանելով ողջամիտ ժամկետ:

Եթե դիմումին կից փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առցանց ներկայացված ֆայլերը կամ դրանցից որևէ մեկը հնարավոր չէ բացել (ընթեռնելի չէ համակարգչի համար) նման ֆորմատի ֆայլերի հետ աշխատանքի համար կիրառելի համակարգչային ծրագրերով կամ ներկայացված փաստաթղթերի սքանավորված պատճենները չեն համապատասխանում սույն կարգով սահմանված պահանջներին, ապա դիմողին հնարավորություն է ընձեռվում համալրել կամ դրանք ներկայացնել սահմանված ֆորմատով՝ սահմանելով ողջամիտ ժամկետ:

8. Ընտրությունների ժամանակ իրենց տեղամասային կենտրոնում քվեարկելու անհնարինության դեպքում տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողները՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և իրենց նախընտրած վայրի մատչելի ընտրական

տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումում պետք է նշեն իրենց համար մատչելի ընտրական տեղամասի համարը:

Հաշմանդամության հիմքով տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողների էլեկտրոնային դիմումները կարող են ապահովվել ստորագրության՝ դիմողի համար ընդունելի ցանկացած եղանակով:

Հաշմանդամության հիմքով տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողների էլեկտրոնային թվային ստորագրությամբ չապահովված էլեկտրոնային դիմումներին կից ներկայացվում է նաև անձի հաշմանդամություն ունենալը հաստատող փաստաթուղթը կամ դրա պատճենը:

Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող այլ անձանց էլեկտրոնային դիմումներն ապահովվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

9. Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները և տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետներն ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումում նշում են այն ընտրական տեղամասի համարը, որտեղ նշանակված են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ կամ տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետ:

10. Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներին ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկելու մասին դիմում լիազոր մարմին կարող է ներկայացվել նաև իրենց նշանակող՝ Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի դիմումի հիման վրա:

Տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետներին ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկելու մասին դիմում լիազոր մարմին կարող է ներկայացվել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից՝ տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետի դիմումի հիման վրա:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներին ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկելու մասին իրենց նշանակող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կողմից դիմումը ներկայացվում է համապատասխան լիազորագրի հիման վրա հանդես եկող անձի (լիազոր ներկայացուցչի) միջոցով:

Սույն կետով սահմանված դիմումն Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) և համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից կարող է ներկայացվել սույն կարգի ձև 1-ով սահմանված ցուցակով, որում պետք է նշվեն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի, մասնագետի ազգանունը, անունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, հաշվառման վայրի հասցեն, այն ընտրական տեղամասի համարը, որտեղ նշանակված են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամր կամ տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետ:

Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից սույն կետով նախատեսված առցանց դիմումը լիազոր մարմին ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ լիազոր ներկայացուցչի կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

11. Սույն կարգով նախատեսված էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումը և փաստաթղթերն այլ անձի անունից ներկայացվելու դեպքում՝ պետք է ներկայացվի նաև նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր:

Լիազորագրում նշվում է լիազորված անձի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, դիմումատուի անունից էլեկտրոնային եղանակով դիմումներ և կից փաստաթղթեր ներկայացնելու և ներկայացվող փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների՝ դրանց բնօրինակներին համապատասխանությունն էլեկտրոնային թվային ստորագրությամբ հավաստելու լիազորություններ վերապահելու մասին, ինչպես նաև լիազորագրի գործողության ժամկետը:

12. Սույն կարգով սահմանված դիմումները կարող են ներկայացվել մինչև համապատասխան ընտրության քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն:

Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողները նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումները կարող են ներկայացնել մատչելի ընտրական տեղամասերի ցանկը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակելուց հետո՝ ոչ շուտ, քան քվեարկության օրվանից 40 օր առաջ (Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 20 օր առաջ) և ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն:

Եթե դիմումը ներկայացվել է մինչև ընտրական տեղամասերի կազմավորումը և համարակալումը, ապա դիմումատուն ընտրական տեղամասի համարի և տեղամասային կենտրոնի հասցեի մասին ծանուցվում է լրացուցիչ՝ ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվելուց հետո:

13. Սույն կարգով նախատեսված էլեկտրոնային եղանակով տրված դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն էլեկտրոնային եղանակով մուտքագրվել է մինչև դիմումը ներկայացնելու համար՝ Ընտրական օրենսգրքով սահմանված վերջնաժամկետի ավարտը:

Ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրերի՝ ոչ աշխատանքային ժամերին մուտքագրված դիմումը համարվում է ներկայացված էլեկտրոնային եղանակով դիմումը մուտքագրվելուն հաջորդող աշխատանքային օրվա սկզբից:

14. Սույն կարգով սահմանված էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումը մերժվում է, եթե՝

1) դիմումը ներկայացվել է սահմանված վերջնաժամկետից ուշ,

2) դիմումը ներկայացվել է առանց էլեկտրոնային թվային ստորագրության, բացառությամբ՝ սույն կարգի 8-րդ կետով սահմանված դեպքի,

3) էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցների կիրառմամբ չի հաստատվել առցանց ներկայացված դիմումի վրա դրված էլեկտրոնային թվային

ստորագրության իսկությունը կամ դրա պատկանելությունը որպես ստորագրող նշված անձին.

4) էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցների կիրառմամբ հավաստվում է, որ առցանց ներկայացված դիմումի (փաստաթղթերի) վրա դրված էլեկտրոնային թվային ստորագրությունը չի պատկանում այն անձին, որի անունից ներկայացվել է դիմումը.

5) առցանց ներկայացված դիմումը և ֆայլերը չեն համապատասխանում սույն կարգով սահմանված պահանջներին կամ դրանցից որևէ մեկը հնարավոր չէ բացել (ընթեռնելի չէ համակարգչի համար) նման ֆորմատի ֆայլերի հետ աշխատանքի համար կիրառելի համակարգչային ծրագրերով և դիմումատուն սահմանված ժամկետում չի վերացրել լիազոր մարմնի կողմից նշված անճշտությունները կամ չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը:

15. Ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ, 3.1-րդ, 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հանվելու և ըստ գտնվելու կամ նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ավելացվելու, ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու դիմումները, բավարարման հիմքի բացակայությամբ և/կամ սույն կարգի 14-րդ կետով սահմանված դեպքերում մերժելու դեպքում, լիազոր մարմինը պետք է եռօրյա ժամկետում դիմողի էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկի ծանուցում՝ դիմումը մերժելու մասին՝ նշելով մերժման հիմքը:

16. Ընտրական օրենսգրքով սահմանված հիմքերի առկայության դեպքում և սույն կարգով սահմանված կարգով ու ժամկետներում ներկայացված դիմումն ստանալուց հետո լիազոր մարմինը՝ եռօրյա ժամկետում, ընտրողի տվյալները ժամանակավորապես հանում է ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և ավելացնում ըստ գտնվելու վայրի կամ նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և ծանուցում է դիմողին այդ մասին:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ, Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողներին լիազոր մարմինը ժամանակավորապես ընդգրկում է քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և ծանուցում է դիմողին այդ մասին:

Սույն որոշման N 2 հավելվածով սահմանված՝ ծանուցման էլեկտրոնային տարբերակն ուղարկվում է դիմողի էլեկտրոնային փոստի հասցեով՝ ծանուցման մեջ նշվելով ըստ գտնվելու վայրի կամ նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի համարը և տեղամասային կենտրոնի հասցեն:

_____
իրավասու անձի անուն, ազգանուն և ստորագրություն

«____» _____ 20 թ.

Ձև 1

Ց ՈՒ Ց Ա Կ

Ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասերի ընտրողների ցուցակներում ընդգրկվող տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների, տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետների

Հ/Հ	**Կարգավիճակ** (ՏԸՀ անդամ կամ մասնագետ)	**Ազգանուն, անուն, հայրանուն**	**Անձը հաստատող փաստաթղթի համար**	**Հաշվառման վայրի հասցե**	**Ընտրական տեղամասի համար** (որտեղ նշանակված են ՏԸՀ անդամ կամ մասնագետ)